

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլ.՝
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մէք հասցէն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտան 10—2 ժամ
(բացի կիրակի և առօրեայ օրերից).
Ցայտարարութիւնը ընդունվում է ամէն լիզուով.
Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Օլգա Ստանիսլավովնա Փիթոյեւան, Մարգարիտա Իսայեւնա Բիւրեղեւան, Նինա
Եղօրօնա Տէր-Մկրտչեանցը զաւակներով, Ալեքսանդր, Գոստանտին և Իվան Եղօրօնի
Փիթոյեւանները զաւակներով՝ յայտնում են իրանց անկեղծ հոգեհաղորդութիւնը այն
բոլոր անձերին, որոնք արտայայտեցին իրանց ցաւակցութիւնը և յարգեցին հան-
գաւանքը

Ի Ս Ս Յ Ե Գ Օ Ր Օ Վ Ի 2 Փ Ի Թ Օ Յ Ե Ա Ն Ի
Երևանում:

ԲՈՎԱՆԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ
Ձիւնակները չեն գործում. ՆԵՐՔԻՆ ՏԵՄԱՆ-
ԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Խմբագրութեան. Ներ-
քին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՄԱՆԹԻՒՆ. Պա-
տերազմի. շուրջը. Նամակ Պարսկաստանից.
Արտաքին լուրեր. ՀԵՌԱՅԻՆՆԵՐ. ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Գերմանիան և իր դադարը:

ՁԻՆԱԿԱՆ ՁԵՂՈՒԹՅՈՒՆ

Հեռագրական գործակալութիւնները հե-
ռագրները տեղեկացրին մեզ, որ թէ
Չինաստանի և թէ Նապոլիայի կառա-
վարչական շրջանները վճռել են չը խախ-
տել չինական չէզոքութիւնը և նոր
բարդութիւններ չառաջացնել ներկայ
պատերազմական ընթիւ վրա:

Առևտրական հեռագրական գործակա-
լութիւնը կարևոր համարեց ծանօթացնել
հասարակութիւնը քաղաքական մամուլի
կարծիքների հետ չինական չէզոքութեան
ինչորի մասին: Ընդհանուր կարծիքը նը-
պաստաւոր է չէզոքութեան պահպանու-
թեան համար, բայց աւելորդ չէ համար-
վում նախազգուշական միջոցներ ձեռք
առնել անսպասելի պատահարների դէմ:
Անգլիական «Standard» լրագրի Տեան-

ձինք թղթակիցը առում է, որ անհրա-
ժեշտ է աշարուշ հսկողութիւն չինա-
կան վարչութեան վրա: Չինաստանում
ուժեղ կերպով առաջ են տանում զին-
ւում ժողովրդում ևն զուսմանը: Դրանց
մէջ կարելի է հնթադրել և վստահաւոր
շարժակները: Թղթակիցը հիմաւոր չէ
զանուսումնանքի կողմից յայտնած երկիւղը
որ իբր թէ կարող են կրկնվել 1900
թուականի դէպքերը, բայց և այնպէս
նպաստակարմար է համարում ուժեղացնել
պետութիւնների հսկողութիւնը Չինաս-
տանում: Լուր կայ, որ Չինաստանը բա-
նակցութիւններ է վարում արտասահմա-
նեան մի բանկի հետ՝ փոխառութիւն ա-
նելու համար այն պատրաստվով, որ փող
է հարկաւոր այրի թագուհու ծննդեան
օրվայ տոնակատարութեան համար:

Գերմանական «Koelnische Zeitung» լը-
րագրը ներշնչված ըստ երկայնի բար-
ձրաստիճանի մի պաշտօնեայի կողմից,
յայտնում է, որ Չինաստանի համար ձեռն-
առն չէ չէզոքութեան խախտումը: Նոյն
իսկ Նապոլիան չէ ցանկանում Չինաս-
տանի զինակցութիւնը: Խեղաքի և գործին
տեղեկ կապանքները հակադաս չեն

լինեն, որ այդպիսի մի զինակցութիւն ա-
ւելի վստասք է, քան օգտակար: Չի-
նական զինուորական ոյժը ընդհանրապէս
թոյլ է և միակ փոքր ի շատէ ուշա-
գրութեան արժանի գործը այն է, որ
գտնվում է զենքայ Մաի հրամանատա-
րութեան տակ, բայց և նրա զինուորական
արժէքը մեծ չէ և երկբայի է: Նթէնոյն
իսկ հաշուի չառնենք այն հանդիմանքը,
որ Չինաստանի մասնակցութիւնը կարող
կը լինէր Ֆրանսիային մղել դէպի պատե-
րազմ, այնուամենայնիւ եւրօպական պե-
տութիւնները ստիպված կը լինէին զօրք
ուղարկելու դէպի Չինաստան: Բայց ա-
ւելի կարևորն այն է, որ չինական չէզո-
քութեան խախտման դէպքում Ռուսաս-
տանը իրաւունք ձեռք բերած կը լինէր իր
զօրքերը շարժել դէպի չինական հողերը
նրանց ապրուստի մթերքներ հայթայթե-
լու համար: Իսկ այդ հանդիմանքը աւելի
մեծ նշանակութիւն ունի, քան այն զին-
ւորական օգնութիւնը, որ կարող կը լի-
նէր տալ Չինաստանը Նապոլիային:

Այժմ պաշտօնապէս թէ Նապոլիան և
թէ Չինաստանը ոչ մի արամարդութիւն
չեն ցոյց տալիս դէպի չէզոքութեան
խախտումը, զանեղով նրան ոչ միայն ա-
ւելորդ, այլ և վստահաւոր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՄԱՆԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Ն

Մեր մամուլը շատ է դրօշվել այն հարցով,
թէ ինչու հասարակ ժողովուրդը չէ գիտում
բոլորներին, այլ նախապատիւ է համարում
իր հէքիմերի և գրքացների օգնութեամբ ա-
զատվել հիւանդութիւններից: Եղան երկու
տեսակ կարծիք յայտնողներ. մի կողմը ա-
միջապարում, ուր կատարելապէս բացակա-
յում է քաղաքացիական-պատժական օրէնս-
գրքի և միջազգային իրաւունքի վերջին
հետքն անգամ, և ուր, դրա փոխարէն, խիստ
է հայրենիքից նշանակված գաղութային վար-
չութեան անձայր կամայականութիւնը՝ կա-
պիտալիստական աւարտումների հովանաւոր
ոյժը:

Ինչ են առում փաստերը:
Ընդամենը 10 տարի է, որ Գերմանիայից
հետզհետէ փոքր քանակութեամբ բնակիչներ
գաղթում են հարաւ-արեւմտեան Աֆրիկա
Այժմ գտնվում են այնտեղ ընդամենը 4682
կաթաղացի բնակիչներ (պաշտօնականներով և
պահապան զինուորներով միասին), որոնցից
276 հոգի զուտ վաճառականներ են, իսկ զը-
րանցից 253-ը՝ գերմանացիներ: Տեղական
բնակիչների թիւը հասնում է մօտ 200,000-ի:
Ինչ ասել կուզէ, որ գերմ. գաղութային կա-
ռավարութիւնը իր «փափկաստուն» հայրենա-
կիցներին երկրի հարթավայր և բերրի մասե-
րում հիւրընկալելու համար, հետզհետէ՝ շատ
անգամ ուժով և բռնութեամբ՝ դուրս է վերն-
դնել «կոշտ ու կոպիտ» սևամորթներին իրանց
մշտանդան ծննդավայրից դէպի երկրի ժայ-
ռոտ, ջրագործի մասերը: Իսկ կենդանական
զգայն ու հասկանալի անգամ բաւական է,
որով կարողանար հերքելու դատել և ժամա-
նակի ընթացքում փաստերով նկատել, որ իր
նոր անապատային միջավայրում անկախող
է բնութեան այն տառա բերքին ունենալ և
այնպիսի օգուտ բաղել անասնապահութիւնից,
ինչպիսին նա իր նախկին պտղաբեր տափաս-
տաններումն էր ունենում:

Բայց այդ բաւական չէ: Բնութեան պար-
զամիտ գաւառի փոխանակ լուսաւորված ևւ-
րօպացու փաթեթով կուլտուրով վերածնվե-
լու, քաղաքակրթվելու՝ ենթարկվում է կօրօ-
նիկաւորների անխնայ կամայականութեան,
որպէս մի անբան կենդանի, շահագործութեան
անշունչ առարկայ: Նրանց ստացվածքը, որ
արտայայտվում էր գլխաւորապէս անասնապա-
հութեան մէջ, հետզհետէ կորզվում էր վաշ-

տում էր, թէ պատճառն այն է, որ բոլորական
գիտութիւնը չէ մօտենում ժողովրդին, մատ-
չելի և հասկանալի չէ նրան. ապապէս պըն-
դում էին գլխաւորապէս ոչ բոլորները: Միւս
կողմը առարկում էր թէ, ընդհանրապէս, ժո-
ղովուրդը խոյս է աւելիս բոլորներից և բժշ-
կական գիտութիւնից, թէ նրա հակացողու-
թիւններին աւելի զբաղւած է մօտիկ՝ բան
Պատեօրը: Մակայն փաստերը, կեանքի երե-
ւոյթները իրանց են ասում. նրանք ամէն օր
բերում են նոր և նոր ապացոյցներ, որ բժշ-
կականութիւնը այնքան խաթմ ու անհասկա-
նալի չէ ժողովրդին, ինչպէս հաւատացնում
են այդպէս մտածողները: Վերջինները մեր կը-
կրի մասնագիտական ազգայնականութիւնը: Ըստ
երկայից, նա ամենից քիչ հաւատ պիտի ու-
նենար դէպի գիտութիւնը, բանի որ թէ իր
կրօնական հասկացողութիւններով և թէ ցի-
զական առանձնապատկութիւններով դարերի
ընթացքում նա ցոյց է տուել իրան եւրօպա-
կան քաղաքակրթութեան հակառակորդ, նոյն
իսկ թշնամի: Այսօր այդ ժողովուրդն էլ մեծ
յօժարութիւն է արտայայտում եւրօպական
գիտութեան յանձնելու իր առողջութիւնը և
եթէ չէ անում այդ այն չափերով, ինչ ցան-
կալի էր պատճառն այն է, որ բոլորական
գիտութիւնը չէ մօտենում նրան, անմատչելի
է, շատ անգամ զուտ անտեսական հանգա-
մանքներ շնորհիւ: Այս իրողութիւնը թուա-
նշաններով, անձնական գիտողութիւններով
ապացուցանում է մի բոլորի Բագուի «Kachik»
լրագրի մէջ: Իր հետազոտութիւններից նա
դուրս է բերում հետեւեալ եզրակացութիւն-
ները.

1) Մասնագիտանքը այցելում են հի-
ւանդանոցները, բուժարանները: Այս հարցի
մէջ դեր է խաղում ոչ այնքան ժողովրդի
անկուրտութեանութիւնը, որքան այն հան-
գամանքը, թէ բոլորականութիւնը լին առ-

խառու վաճառականներից, նրանց իւրաքան-
չիւր արդար բողբոջն ու արտունջին հետևում
էր «վայրենի» սպիտակամորթի գանակոծու-
թիւնը, որի ու սուրին հարուածը:

Դեռ 1897 թ.ին հերերոնները ունէին մօտ
3—400,000 գլուխ արջաւ: Իսկ 1902/3 թ.ին՝
չնորհիւ մի կողմից անասնական ժանտախտի,
միւս կողմից նրանց նոր վիճակված անարօ-
տատելի միջավայրի և, որ գլխաւորն է, եւ-
րօպական վաճառականների վաշխառու կեղե-
քումների, մնում է 200,000 սևամորթների
ձեռքին ընդամենը 45,899 գլուխ արջաւ, իսկ
4,682 գաղթական սպիտակամորթների տա-
մադրութեան տակ՝ 44,487 գլուխ արջաւ:
Իսկ ընդհանուր առմամբ, բոլոր անասունների
թիւը հասնում է, երեւակայեցէք, մի բուն
եւրօպացիների մօտ՝ 210,803 հատի, իսկ հա-
րիւր հազարաւոր ճորտացած հերերոնների մօտ՝
136,557 հատի:

Այս գերմանական գաղութային կուլտուրան
ու սնեւորքիւր:

Եւ ի հարկէ կապիտալիստական տնտեսու-
թեան և բունի ոյժի ներկայացուցիչ գաղու-
թային կառավարութեան լօգիկայով թշուառ
հերերոն մեղաւոր է, զատապարտութեան ար-
ժանի, երբ նա իր բարեբեր բնակավայրից և
աղբատիկ ունեցվածքից զրկվելով, ակամայ
հնազանդվում է իր կենդանական բնազդնե-
րին և ինչ միջոցով էլ լինի՝ գողութեամբ թէ
յափշտակութեամբ, ապրուստ է հայթհայթում
իր համար: Այդ դէպքում միայն գոյութիւն ու-
նի պատժական օրէնսգրքերը, խլաս արեւա-
նեղ յօդուածներով:

Երկար ամիսներ են անցել և Գերմանիային
գիւտ չէ աշդվել բոլորովին ճշնել ապատու-
թեան զոհներին: Շարունակ հոր գնդեր են
գործում: Նրանք կոտորում են մասայով, նախ-
ճիւր են սփռում, չը խնայելով անգամ կանանց
և մանուկներին, իսկ իրանք զո՞ տալիս ան-
հատներով: Մինչև օրս ընկել են բաւական
թուով գերմանական զինուորներ և բարձրաս-
տիճան զինուորականներ:

Ի. Բշխանեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՒ ԻՐ ԳԱՂՈՒԹՅՈՒՆ
(Նամակ Գերմանիայից)

Երէկ հարաւային Աֆրիկա, այսօր հարաւ-
արեւմտեան Աֆրիկա... Երէկ քաջամարտիկ
բոյները մինչև վերջին կաթիլ արիւնաբա-
նդան Անգլիայից, այսօր գերմանական խոտա-
պարանոց գրեհադէքը անխնայ նախճիւր է
սփռում սեւամորթ հերերոնների մէջ: Խեղճ բնու-
թեան գաւառի, ինչ է ուղում բեղնից, ինչու
բնաբարում է ըտ կուսական ազատութիւնը
սպիտակամորթ «վայրենիք»...

Ճիշտ ուսուհասօնական կուռի սկզբնաւո-
րութիւնից փոքր ինչ առաջ յուզվում և ապա-
սամբութեան է կանգնում գերմանական՝ Աֆ-
րիկայի հարաւ-արեւմտեան գաղութի տեղա-
կան ազգաբնակչութիւնը՝ հերերոնների ցեղը:
«Ճշնել, տեղի ու տեղը խեղդել և հարկաւոր
այդ լիբը ապստամբների յանդուգն քայլը:
Պէտք է շուտ ազատել մեր գաղթական հա-
րկակիցների կեանքը...»: Այս ստապտական
խօսքերն է հեռագրում Վիլհելմ կայսրը՝ Հաւ-
բուրգից իր գորազնդով Աֆրիկա ուղևորվող
բարձրաստիճան զինուորականին: Այսպէս հրա-
մայում է այն կայսրը, որ նորագոյն անցեա-
լում, Վալդիբրէի հրամանատարութեամբ Չի-
նաստան գնացող զօրքին ուղղել է ի միջի աշ-
րց՝ «Pardon wird nicht gegeben» (չը պէտք է
ներկ) խօսքերը:

Եւ կայսրի հեռագրով հաղորդած այդ շու-
տափոյթ հրամանին մեծ գոհունակութեամբ
արձագանք է տալիս քաղաքական սամբոյժ
մամուլը՝ պահպանողականից մինչև վերջին
լիբերալ թերթը: Նոյն կերպ և քաղաքական
կուսակցութիւնները: Կառավարութեան առա-
ջարկը բայխատագին՝ Չիւ միլիոն մարկ յատ-
կացնել կուռի ծախքերը հոգալու համար, իս-
կայն, առանց որ և է բնական բողբոջ, ըն-
դունվում է բոլոր կուսակցութիւններից, ի հարկէ

տիճան մատչելի է նրան, այսինքն զուտ անտեսական պատճառները:

2) Որքան բժշկականությունը մոտենում է ժողովրդին, այսինքն որքան նա մատչելի է դառնում՝ այնքան էլ ժողովուրդին է մոտենում նրան:

3) Տեղացի աղքատ ազգայնականներն մէջ գործող բժշկները պիտի իմանան տեղական լեզուն. այս էլ մի միջոց է, որ հասարակ ժողովուրդը աւելի մեծ յօժարութեամբ դիմէ բժշկին:

Հարցը, ուրիշն, պարզ է.—մատչելիութիւն, էթնոստիկան, ժողովրդականացում մայրենի լեզուի միջոցով: Պահանջել ժողովրդից, որ նա ինքնաբերաբար, առանց պատրաստութիւնների, այնպէս վերաբերվի բժշկականութեան, ինչպէս վերաբերվում է ինտելիգենցիան, կը լինէր մի վերին աստիճան միամիտ, նոյն իսկ անմիտ բան: Պէտք է, որ գիտութիւնը ինքը մօտենայ ժողովրդին, շահագործէ նրա մէջ գոյություն ունեցող հակումները, նուաճէ նրան: Իսկ մեզ ժողովրդի վրա գցել կը նշանակէ աչք փակել իրականութեան առաջ, արդարացի մասնապիւղական պատճառաբանութիւններ գտնել: Մենք չենք ուզում նորից վերադառնալ այն հարցին, որ դաւառներն ու գիւղերը միտում են առանց բժշկի, որովհետեւ գնադրոյնը չը կան: Նոյն իսկ քաղաքներում էլ, ուր կան բժիշկներ, պիտի մըտածեն, որ գիտութիւնը հարկաւոր է տարածել, մատչելի դարձնել, ժողովրդականացնել ամենալայն չափերով...

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մէքէլզա, 17 ապրիլի

«Մշակի» 73 համարում կարգադրեց Մ. Տ. Շուտի նախաձեռնող, որը, անձնական հաշիւներից զրկւած, ինչ գրելը ինքն էլ չէ իմանում: Մենք կարգադրվ յիշելու նամակի Շուտ ստորագրութիւնը, աւելորդ համարեցինք պատասխանել, որովհետեւ լաւ ծանօթ էինք այդ անձնատուութեան, տեղիս քահանայի և մեր, մի քանի, գիւղացիների ունեցած յարաբերութեան, բայց վերջը մտածելով, որ «Մշակը» ունի ուրիշ ընթերցողներ, որոնք, տեղեկ չը լինելով պարոնի անձնատուութեան և մեր յարաբերութեան դէպի նա, կարող են սխալ կարծիք կազմել, գրել վերցրինք:

Ծարգելի պարոնը, ցանկացածով թագցնել տեղ հօր և մեզ նաև ունեցած հաշիւը, սկսում է Մէքէլզայի և նրա բնակիչների մասին սխալ տեղեկութիւններ տալ (այդ մարդը Մէքէլզայի հոտն անգամ չէ առել): Փոխում է քահանայի ամուսնութեան հարցի գոյնը, յիշում է «զալ-մաղաթ», բայց չէ ուզում թել ալ գլաժաղանքը, որովհետեւ իր արբանեակներին և չենք իրան էլ կարող էր վերաբերել:

Պ. Շուտի կարծիքով, մենք մի քանի տասնեակ տարի է բնակվում ենք Մէքէլզայում և մեր պոպկերից ոչ մի բանով չենք զանազանում: Ընթերցող, կարծես մի քանի տասնեակ տարի առնելով պէտք է հասկանալ ամենապարզ 20 տարի, այնինչ 13-րդը տարին է, որ մենք Մէքէլզայում բնակութիւն ենք հաստատել, և այս ժամանակաշրջանում մեր գիւղը դարձել ենք մի փոքրիկ գիւղաքաղաք, որը կարելի է համեմատել Մանգլիսի հետ, միայն այն զանազանութեամբ, որ մեր գիւղը Մանգլիսից փոքր է: Սակայն պէտք է խոստովանել, որ մեր գիւղը երբեք յիշատակ ամատանոցին չէ կարող հաւասարվել, որովհետեւ հողատեր գիւղացիների թիւը 40-ից չէ անցնում, այնինչ որպէս զի գիւղը գիւղեցկանայ, պէտք է գիւղացիների սեփականութիւնը լինի:

Եթէ բնական գիւղեցկութեան հետ ունենալ նոր Մանգլիսի կէսի չափ բնակչի, բոլորովին ուրիշ տպաւորութիւն կը թողնէր մեր գիւղը:

«Ճանախ տարիներ առաջ ընդունելով ուսումնականութիւն» խօսքերը այնպիսի ստեղծ են, որ երեւակայել անգամ չէ կարելի: Մեր ժողովուրդը մեծ մասամբ գաղթել է 95 թվականներին, և ես էլ մի խումբ գաղթականների հետ էի, որոնք, զանազան պատճառներով, մինչև այժմ էլ ապրում են անցաքաղաքում:

Շուտը ոչ մի բանով չէն զանազանում իրանց նախնի հայրենակցներից» խօսքերը ես բոլորովին չեմ հասկանում: Հարկաւոր էր մեզ պոպկերից զանազանվել: Կարծես, ոչ, պարոն Շուտ: Սրանից 13 տարի առաջ մեր բնակիչները Թիֆլիսից եկած ուսուցիչների լեզուն բոլորովին չէին հասկանում. ուսուցիչները ստիպված էին առաջ տնօրէն տեղիս բարձրագույն և ապա սովորեցնել: Այժմ բոլորովին ուրիշ է. ընթերցանութիւնը այնքան տարածված է մեր գիւղում, որ բաւականաչափ լրագրիներ, ամսագրիներ և գրքեր են ստացվում:

Բացի դրանից ներսիսեան դպրոցում ունենք 6 աշակերտ, էջմիածնի ձեռնարկում 4, Երևանի թեմական դպրոցում 1 և մօտ 20 աշակերտներ Սուրբուհի ուսումնարաններում: Այս երկուքը տարբերութիւն չէ՝ մեր պոպկերի վերաբերութեամբ:

Տէր հօր ամուսնութեան հարցը ձեռն է, գոյութիւն ունի, բայց ինչու պարոնը Թիֆլիսից գոյն է առել:

Տէր հայրը երկար ժամանակ է երեքսիւնօշից գրկվել է, և այժմ գտնվում է ամուսնութեան ընդունակութիւնից զրկվելու պայմաններում: Ժողովուրդը նրան թող է տուել ժամանակին ամուսնանալու, ոչ թէ «կուխարկա» (մեզ մօտ անբարոյական կին է նշանակում) պատճառով, որ չէ ամուսնում գրել, բայց նա, իբրեւ քահանայ, չէ համարձակել այդպիսի քայլ անել: Նրան թիւսգրել և նամակ են քահանայներ, աշխարհականներ և չենք իր ժողովուրդը, որ գուցէ թոյլատրելին լինի տեղեկներին երկրորդ և երրորդ անգամ ամուսնանալու:

Բայց պէտք է ասել, որ ժողովրդի տակը նշանակութիւնը այդ հարցին՝ կախումն ունի Ամենայն Հայոց

Ամենայն Հայոց եպիսկոպոսի տրված խնդրի դրական կամ բացասական պատասխանից:

Ա. Ձեյթունեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Երէկ, ամսիս 3-ին, Թիֆլիսի քաղաքային գումարի նիստի վերջում, քաղաքագլուխը ամենի համար միանգամայն անսպասելի լուր յայտնեց՝ այն է իր հրաժարականի մասին: Պատճառը այդպիսի յայտարարութեան իր հիւանդութիւնն է, որի պատճառով անկարող է իր վրա դրած պարտականութիւնները ինչպէս հարկն է կատարել: Ձայնաւոր Խատիսեանը մի քանի ազգու խօսքերով գրուստելով պ. քաղաքագլխի մատուցած ծառայութիւնները, իր կողմից խնդրեց պ. քաղաքագլխին յետ վերցնել իր հրաժարականը և ստանալով արձակուրդ, թէկուզ մի տարով, գնալ բժշկվելու և ապա ստանձնել իր պաշտօնը: Սրան միացան բոլոր ձայնաւորները, յայտնելով իրանց գոհունակութիւնը բուն ծափահարութիւններով: Չը նայած այսպիսի բուն և անկեղծ վերաբերմունքի դէպի իրան և իր գործունէութիւնը՝ այնուամենայնիւ պ. քաղաքագլուխը պնդեց իր հրաժարականի վրա և փակեց նիստը:

Մայիսի 9-ին, կիրակի օր, Թիֆլիսի արքունական թատրոնում կը տրվի մի ներկայացում, որի վրա դարձնում ենք մեր ընթերցողներին ուշադրութիւնը: Ներկայացման նպատակն է օգնել մի հիւանդ զրոյի: Այդ զրոյը Դաւիթ Կեղեկին է, որ երկար տարիներից ի վեր աշխատակցում էր տեղական ուսուցիչ լրագրիներին՝ «Ջօիլ» («Novus»), «Դաւիթ Սօսիսին» կեղծ անուններով: Դա մի շատ բեղմնաւոր, շատ սրամիտ և համակրելի գրիչ էր: Տարիներով նա անխնայ ծաղրում էր յետադիմացութիւնը, խաւարամտութիւնը, պաշտպանում էր խելահիւս, մարգարիտութեան, ազգերի եղբայրացկութեան գաղափարը: Մանուսկրութեւնը ուսուցիչ էր այն պայքարը, որ մեզ Կեղեկին վէրջիցի դէմ, երբ նա խմբագրում էր «ԲԱՅԱՅ» լրագիրը, լինելով շօխիզմի, ինքնագործութեան հակառակորդ, Կեղեկին անուղղում ընդադառնութեան էր ենթարկում իր այն ազգակից վրացիներին, որոնք պատկանում էին նացիֆոնիստական բանակին և միջնացում էին ժողովրդի միտքը: Ահա այդ բեղմնաւոր, անխնայ աշխատող մի տարուց աւելի է, ինչ անտանելի ծանր հիւանդութեան է ենթարկվել և տանջվում է ոչ միայն ցաւից, այլ և այն անսպասելի գրութիւնից, որ ծանրացած է նրա և նրա ընտանիքի վրա: Գրական վատասկաւորի տխուր ճակատագիրն է սա մեզանում— իր բոլոր թարմ ոյժերը, իր ամբողջ մտաւոր կարողութիւնը նուիրել ժողովրդին, ծառայել հասարակութեան խղճմտանքով, անձնուիրաբար և ապա տանջվել անվերջ, տանջվել ցաւերի և մանասանդ արքատութեան ստեղծականից: Մեր հասարակութեան վրա բաւարոյական պարտք կայ թիւեակցանքու պ. Կեղեկին տանջանքները իր համակրութեամբ և աշակցութեամբ: Մենք յոյս ունենք, որ կիրակի օրվայ ներկայացումը, որի մասին յայտարարութիւն է տպվում և «Մշակի» մէջ, կը գրուէ հասարակութեան ուշադրութիւնը և կը դառնայ գեղեցիկ ատիթ մեծարելու այն հանրամարդկային գաղափարները, որոնց այնպիսի մեծ եռանդով, փայլուն կերպով ծառայում էր պ. Կեղեկին:

Ինչպէս արդէն հաղորդել էինք, Կովկասից Ս. Լուիի համալսարանային ցուցահանդէսին ուղարկվելիք ցուցադրելի իրերը յանձնված են Կովկասեան թանգարանին: Այժմ արդէն այդ իրերը եկել հասել են Օդեսայից. բայց թանգարանը բաւականաչափ չի դիմել իր յանձնարարով, չէ կարող ցուցադրել իրերը հասարակութեան համար:

Ամսիս 6-ին պ. քաղաքագլուխը հրաւիրում տեխնիկ ձայնաւորներին հաւաքով քաղաքային վարչութեան շինութեան մէջ, որ միասին գնան նայելու այն ազատ հողերը, որոնք նշանակված են էլէքտրական կայարանի շինութեան համար:

Կայսերութեան բոլոր արդիւնաբերական դպրոցներին վերադառնալ պ. Ռուզիֆը, գաւրով Թիֆլիս, երէկ, ամսիս 4-ին քաղաքային վարչութեան անդամ իշխան Ն. Արզումանյանի հետ սկսեց ըննել արհեստաւորների զբաղումը:

Արդիւնաբերական դպրոցների ընդհանուր վերադառնալ պ. Ռուզիֆը խորհուրդ է տալիս, Հաւաքարում փոխանակ պրօգրիմադիայի՝ բանալ արդիւնաբերական ութգոյսարանեան դպրոց, որը կը նստի տարեկան 43,000 ռ. և ծրագրերն էլ բնականաբար դպրոցի ծրագրի չափ կը լինի:

Թիֆլիսի արհեստաւորների աւագը հրաւիրեց բոլոր համայնքների գլխավորներին և նըրանց ընտանիքները յանձնեց իր կադմած մի ծրագրի, որով առաջարկում է բաց անել Թիֆլիսում հիւանդութիւնների ժամանակ օգնութեան հասնելու գրամարկը արհեստաւորների համար: Պ. աւագը առաջարկում է պետական բանկում պահվող 990 ռ. 50 կ. դուսմարը դարձնել այդ նոր գրամարկի ֆոնդ և այնուհետեւ նոր միջոցներ առաջարկել այդ ֆոնդն աւելացնելու համար:

Թիֆլիսի շուկայի կառավարիչ Թէմուրազեանցի միջոցով ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը կադմած են 35 արձանագրութիւններ, որոնցից 24-ը միւր տակաւից աւել ծախելու համար է, 4-ը՝ տեսակների չը բաժանելու համար, 6-ը տաւարի միւր գոմէշի մի հետ խառնելու համար և 1-ը գաղտնի տաւար մորթելու համար:

«НОВ.» լրագիրը լսել է, որ կառավարիչ սեփական է հասել այն հարցը, թէ արդէ՞ քաղաքային ծրագրադրի կուրսերը պէտք է համարել բարձրագոյն դպրոցական հաստատութիւն, որն իր դասընթացն աւարտող հիւանդութեան ծագումն անձերին տալիս է իրաւունք Ռուսաստանում ամեն տեղ ազատ բնակութիւն հաստատելու: Առաջ բերելով այդ լուրը, լրագիրն աւելացնում է, թէ «Ինչպէս մենք լսել ենք, այդ հարցը վճռված է դրական մտքով»:

Եկատերին օգոստիսի մեզ գրում են. «Ապրիլի 29-ին Եկատերինօպոլիսի նահանգական դատարանի շարժական բաժինը Արմաւիրում ըննեց 1903 թվին սեպտեմբերի 8-ին նոյն քաղաքում հայոց եկեղեցական կառուածների ատիթով պատահած դրծի: Մեղադրվում էին 22 հոգի: Դատարանի նիստերը տեղեցին 2 օր, ապրիլի 28 և 29-ին: Մեղադրվածներից 21 հոգի դոնաց հրատարակված վճռով անմեղ ճանաչվեցին, իսկ մէկ հոգի միայն դատարարվեց 10 օր բանտարկութեան տեղական ոստիկանատան մէջ: Պարտադրում էին երդուեալ հաւատարմատար Գ. Բախչիսարայցովը և երդուեալ հաւատարմատարի օգնական Շիտակին (Եկատերինօպոլիսի երկուն էլ), իսկ Արմաւիրից մասնակցում էին երդուեալ հաւատարմատարներ Զաւար Բալուղեանը, Վիկտոր Լուսինը և արքունական փաստաբան պ. Սկալսկին»:

ԱՆԱՆՅԱՆՆԻՑ ԵՆԳՐՈՒՄ ԵՆ. «Կիրակի քաղաքային պարտէզում, իշխանուհի Վաչիշանձէի նախաձեռնութեամբ, նշանակված էր «զօրանք» բարեգործական վաճառքով: Պարտէզի մուտք նշանակված էր տաւը կօպէկ և յատկացված էր պատերազմի դաշուում վիրաւորվածների օգտին»:

ԱՐԱՐԱՆԻՑ (Երևանեան նահանգ) մեզ գրում են. «Արարատում կարծես թէ այս տարի դարունը միտք չունի գալու. դաշտեր, ձորեր ու սարեր պատում են ձիւնով: Անցած օրը Արթուրեալ գիւղի մօտ ստեղծ են երկու հողից ցորդ ու բուրբի: Մայիս է, բայց վառարանները վառվում են: Գիւղացիք դեռ դուրս չեն եկել դաշտ իրանց վար ու ցանքը սկսելու և երեւի շատ պէտք է սպասէ խեղճ քաղաքացին, որ ձիւնը հալվել և եղանակը տաքանայ, որ կարողանայ սկսել իր դաշտային աշխատանքը: Աւելի կիրառական է այն հանրամարդկային գաղափարները, որ մինչև հիմա դուրս չեն եկել և փակված են գոմերում. պաշարը բոլորովին վերջացել է: Ժանտախտի պատճառով բոլոր ճանապարհները փակված են և չեն կարողանում ուրիշ տեղերից խոտ բերել. այնպէս որ մի կողմից անառնները կոտորվում են պաշար չը լինելու պատճառով, իսկ միւս կողմից զոհ են գնում ժանտախտին: Գիւղացիների գրութիւնը շատ ցաւալի է»:

Բօրչալուի գաւառի ՇՆՈՂ գիւղից մեզ գրում են. «Գարունը մեղմանում է արդէն քաղաքում է, բայց շարունակ տեղացող անձրեւների պատճառով խախտանքը դեռ չէ սկսված: Վերջին օրերս, սակայն, եղանակը լաւացաւ և

գիւղացիք ուրախութեամբ սկսեցին աշխատել դաշտերում ու այգիներում: Այգիներից, բոտերկոյին, բերք սպասվում է, իսկ արտերը, շնորհիւ երաշտային աշնան, նոսր են և նուազ: Ուրախութեամբ պէտք է յիշել, որ մեր գիւղերում, թէեւ ուշ, վերջապէս հասկացվել է եւրօպական գութանների առաւելութիւնը և ամենքը հաճութեամբ աշխատում են ձեռք բերել, թէկուզ հենց պարտքով էլ լինի: Ձեռք են բերվել և գործադրութեան մէջ մտել նաև այգիների բժշկելու գործիքներ: Երանի թէ գութանների տարերութիւնը հասկանալուց յետոյ, մեր գիւղացիք աշխատելին մտածել գոնէ մի այցելու ֆելդշեր ունենալու մասին, որի կարեւորութիւնը վաղուց գգալի է: Այս օգտակալ գործը իրականացնելու բարոյական պարտաւորութիւնը դրվում է գիւղի քահանաների վրա, բայց ցաւելով պէտք է ասել, որ նրանք այնքան են զբաղված միմեանց հետ կաւելով, որ ժամանակ անգամ չունեն մտածելու ժողովրդի մասին»:

Նախիջևանի դաւառամասի ՏԻՖՈՒ գիւղից մեզ գրում են. «Անցկացրինք դարձան երկրորդ ամիսը և արդէն երրորդին ոտը ենք դնում, բայց գարնան նշոյլ պայծառ արեգակ չէ երևում. կարծես ձմեռվայ վերջին ամիսներում ենք: Այս տարի ամեն օր ձիւնախառն անձրեւ, սառը քամի, մշուշ, երկինքն ամպամած, գետինը ցիւր, զգալի ցուրտ է, վառարանները դեռ չեն վերցված, աթար էլ չը մնաց այրինք, տարանանք: Մեր դաշտային մասի գիւղացիք, չը նայելով եղանակների վատութեանը, գարնանացանք թիչ ունենալով, մի կերպ համարեա վերջացնելու են, շնորհիւ աշնանացանի, որը մեծ մասամբ ցանել վերջացրել էին: Իսկ շնոնային մասի գիւղացիների գրութիւնը, եթէ, եղանակները մի քանի օր էլ այսպէս շարունակվին, անտանելի կը դառնայ մօտ 8—10 օր է ինչ հաստ ձիւնը հալվել, գետինը բացվել է. հիմա էլ անձրեւները թոյլ չեն տալիս ցանելու, գործելու. մինչև օրս ոչ մի հատիկ անքմ չեն գցել հող: արանից յետոյ կը պէտք է ցանեն, կը հատենանայ հնձեն, որ աշունքվայ ցորենին զոհ չը գնան: Բանջարանոցների դեռ մնում են առանց ցանելու բոլոր աշխատութիւնը դանդաղ է առաջ գնում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԻՐԱԶՄԻ ՇՈՒՂԸ

Ֆրանսիական (Իմիմիստի կարծիք: Ֆրանսիական նախնի արտաքին գործերի մինիստր Զանօնո, «Patrie» լրագրի մէջ հետեւեալ կարծիքն է յայտնել ուսուհասական ընդհանրման ներկայ գրութեան մասին. «Իմ կարծիքով, պատերազմի գլխաւոր և վճռական մասը կատարվելու է Մուկղէնում: Այժմ հասկանալիները ամեն հնարաւորը կանեն, որպէս զի իսպանիան ուսուց ոյժերի կենտրոնացումը, կաշխատեն ամի իշխել Լեանդունեան թեքակղզու վրա, կը վերսկսեն յարձակումները Պօրտ-Արտուրի, Վաղդիօսաօկի վրա: Ռուսական զօրքը պէտք է հսկէ ամեն բանի վրա: Կուրպատիկներ պէտք է արթնան կերպով հսկէ, չը մոռանալով, սակայն, որ իր գլխաւոր ոյժերը պէտք է պահպանվեն Մուկղէնի պաշտպանութեան համար, որի պահելը մեծ բարոյական նշանակութիւն ունի: Մուկղէնի պահելը անհրաժեշտ է գնեկալ Կուրպատիկներին, որպէս զի կարողանայ պահպանել բարոյական հեղինակութիւնը և Չինաստանի աշքում: Հնարաւոր է, որ այժմ, այն դժուարութիւնների պատճառով, որոնք կարող են ծագել Չինաստանի կողմից, շատ բան կախված կը լինի Մուկղէնից: Եթէ Մուկղէնը ռուսները կարողացան պահել՝ Չինաստանը, հաւանական է, հանդարտ կը մնայ: Հակառակ դէպքում ես շատ պէսամիտ աչքով եմ նայում Չինաստանի գրութեան վրա: Չէ կարելի այլ ես կասկածել, որ դեղին ցիւղի մէջ մի առանձին նախադրամագրութիւն կայ եւրօպացիների դէմ: Եւրօպացիների հեղինակութիւնը Չինաստանում չափազանց ընկել է: Ամեն տեղ Մարայում բարեացակամութեան զգացումներ են տածում դէպի այն նոր աստղը, որ ծագում է Արևելքում և զարթոնցում է առիտացիների յոյսերը: Չինական կանոնաւոր կամ անկանօն գործերի առաջին շարժման Ռուսաստանը կարող է պատերազմ յայտնել Չինաստանին, և այդ ժամանակ գործողութիւնների ծրագրերը նշանաւոր կերպով կը լայնանայ: Փոխանակ կենտրոնանալու Մանջուրիայի և Կորէայի սահմաններում, պատերազմը կը

